

**ՄԵՂՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ
ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՏԱՅՏՄԱՆ ՏՆՄԱՆՏԱՐՑԵՐԸ
ՍԱՏԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲՐԵՍԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Մեղքը՝ անկախ դրա տարբեր մեկնաբանություններից, ընկալվում է որպես բացասական երևույթ: Մասնագիտական գրականության մեջ «մեղք» տերմինի վերաբերյալ կան հակասական և, հաճախ, միմյանցից բավականաչափ տարբերվող մեկնաբանություններ՝ կախված այդ եզրույթի գիտագործնական նշանակության ընկալումից:

Հանցագործության կարևոր հատկանիշը՝ մեղավորությամբ կատարված լինելն է: Արարքը, որքան էլ որ վտանգավոր լինի, որքան էլ որ ծանր հետևանքներ առաջացնի, չի կարող հանցագործություն համարվել, եթե դրանում բացակայում է անձի մեղքը:

Մեղքն անձի հոգեբանական և պետության իրավական վերաբերմունքն ու ընկալումն է անձի կողմից իրականացված արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ: Այսպես՝ 2015 թվականի խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը» վերտառությամբ 71-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ. «Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է»: Պատահական չէ, որ մեղքի սկզբունքի սահմանադրական ամրագրումը կենտրոնական դերակատարություն է ստանձնում այն հասարակական հարաբերությունների կարգավորման և դրանց համար օրենսդրական բազայի ստեղծման ընթացքում, երբ նույն մեղքն ընկալվում է որպես հանցանք կատարած անձի պատժի հիմք: Հենց այս

տրամաբանությամբ է Սահմանադրության մեջ 71-րդ հոդվածի մեղքի սկզբունքը համադրված պատժի համաչափության սկզբունքի հետ:

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ մեղքի սկզբունքի հիմնարար ուսումնասիրության համար «մեղք» եզրույթի էության բացահայտումը կարևորվում է այն պարզ պատճառով, որ այն նույնաբովանդակ սահմանադրական սկզբունքի հիմնական բաղադրիչն է:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքների համակարգում առանցքային նշանակություն ունի ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է օրինականության, օրենքի առջև հավասարության, պատասխանատվության անխուսափելիության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, արդարության և պատասխանատվության անհատականացման ու մարդասիրության սկզբունքների վրա:

Կարծում ենք, որ մեղքի էության ու դրա իրավական սահմանման բացահայտումը կարևոր դեր կարող է ունենալ ոչ միայն մեղքի սկզբունքի էության, այլև դրա սահմանադրական իմաստի բացահայտման գործում:

Մեղքը՝ հայրենական և արտասահմանյան գրականության մեջ, մասնավորապես քրեական իրավունքին առնչվող գրականության մեջ շատ հաճախ ստա-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



նում է տարբեր սահմանումներ:

Մարդու մեղքն արտացոլում է անձի ներքին հոգեբանական վերաբերմունքն իր գործողությունների և դրանց հետևանքների նկատմամբ: Այս հոգեբանական վերաբերմունքը դրսևորվում է անձի հոգեբանական գործունեության մտավոր և կամային բաղադրիչներում: Մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է, իր կողմից կատարված հանրային վտանգավոր արարքների և դրա հետևանքների նկատմամբ՝ դիտավորության և անգգուշության տեսքով: Մեղքի բովանդակությունը ձևավորվում է անձի հոգեկան գործունեության երկու տարրով՝ գիտակցությամբ և կամքով, որոնք բնութագրվում են հանցագործություն կատարելիս մարդու հոգեկան գործունեության գործընթացի ինտելեկտուալ և կամային բաղադրիչներով: Այս բաղադրիչները անվանվում են մեղքի մտավոր և կամային տարրեր¹:

Մեղքը որպես քրեաիրավական հասկացություն, իր մեջ արտահայտում է անձի հոգեբանական (մտավոր և կամային) վերաբերմունքը հանրային վտանգավոր գործողության (անգործության) և վրա հասնող հանրային վտանգավոր հետևանքների նկատմամբ: Իսկ որպես սոցիալական հասկացություն այն բնութագրում է անձի վերաբերմունքը հասարակության մեջ հաստատված սոցիալական կանոններին և սովորույթներին, նրա վրա դրված պահանջներին: Մարդու բացասական վերաբերմունքը սոցիալական պահանջներին, կանոններին և սովորույթներին, դրսևորված իր կողմից կատարված հանցագործությամբ, որոշում է մեղքի սոցիալական էությունը²:

Մեղքը քրեական իրավունքում մի կատեգորիա է, որը արտահայտում է անձի հոգեբանական վերաբերմունքը կատարված հանցավոր ոտնձգության, այսինքն, գործողության կամ անգործության, որն ունի հանրային վտանգի հատկանիշ և դրա կատարման հնարավոր հետևանքների նկատմամբ³:

Մեր օրենսդրությունը հիմնված է մեղքի

հոգեբանական տեսության վրա⁴:

Մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորվում է դիտավորության կամ անգգուշության ձևով⁵:

Վերոնշյալ հոգեբանական տեսությանը համահունչ մեկ այլ բնորոշմամբ, մեղքը՝ իրավական նորմի խախտմամբ վնասակար կամ հանրության համար վտանգավոր գործողության (անգործության) ներքին սուբյեկտիվ կողմն է, անձի հոգեկան-իմացական վերաբերմունքը՝ իր կատարած արարքի ու նրա հետևանքների նկատմամբ:

Մեղքի վերաբերյալ հիշատակված բնութագրիչների համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է ընդգծել, որ այդ ձևակերպումներում առկա են որոշակի խնդրահարույց հարցեր, որոնք հանցանք կատարած անձի պատժի հիմք համարվող մեղքի սահմանադրական սկզբունքի տրամաբանության շրջանակում, որոշակի հստակեցման կարիք ունեն: Ավաժծի հիմնավորումը կփորձենք տալ մեղքի ձևերը բացահայտելուց հետո միայն՝ փորձելով չկենտրոնանալ վերջիններիս վրա:

Այսպես, մեղքը դրսևորվում է դիտավորությամբ և անգգուշությամբ: Դիտավորությունն իր հերթին լինում է երկու տեսակի՝ ուղղակի դիտավորություն և անուղղակի դիտավորություն, իսկ անգգուշությունը՝ հանցավոր ինքնավստահություն և անփութություն:

Մեր անհամաձայնությունը հիմնավորելու համար հարկավոր է փոքր-ինչ բացահայտել հանցավոր ինքնավստահությունը և անփութությունը՝ որպես մեղքի այնպիսի ձևի դրսևորումներ, որոնք ունեն առավել ցածր հանրային վտանգավորության աստիճան:

Հանցագործությունը համարվում է հանցավոր ինքնավստահությամբ կատարված, երբ անձը նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց վստահո-

րեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն:

Հանցագործությունը համարվում է անփութությամբ կատարված, երբ անձը չի նախատեսում վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանց առաջացումը:

Անձը քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, եթե նրա գործողություններում առկա են հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշները, այդ թվում՝ մեղքը:

Մեղքը հավաստելու համար անհրաժեշտ է հավաստել ոչ միայն այն, որ մարդը գիտակցել է իր արարքների փաստական հանգամանքները, այլև այն, որ նա գիտակցել է (կամ կարող էր և պարտավոր էր գիտակցել) իր արարքների սոցիալական էությունը (հանրային վտանգավորությունը), ինչպես նաև նախատեսել է (կամ կարող էր նախատեսել) դրանց հետևանքները⁶:

Այսպիսով, որպեսզի արարքը հանցագործություն համարվի, անհրաժեշտ է, որ դրանում առկա լինեն վերը նշված երեք հատկանիշները՝ հանրային (հասարակական) վտանգավորությունը, քրեական հակաօրինականությունը (քրեական օրենսգրքով արգելված լինելը) և մեղավորությունը: Այս հատկանիշներից թեկուզև մեկի բացակայությունը կնշանակի, որ արարքը հանցագործություն չէ:

Արարքում մեղքն առկա է այն դեպքում, երբ անձը հասկանում է, որ իր արարքը վտանգավոր է, կառաջացնի վտանգավոր հետևանքներ ու ցանկանում է այդ հետևանքների առաջացումը (ուղղակի դիտավորություն), իսկ եթե չի էլ ցանկանում այդ հետևանքների առաջացումը, ապա ոչինչ չի անում, որ դրանք չառաջանան (անուղղակի դիտավորություն), կամ էլ հասկանում է, որ իր արարքից կարող են վտանգավոր հետևանքներ առաջանալ, բայց թեթևամտորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն (հանցավոր թեթևամտություն), կամ էլ չի գիտակ-

ցում իր արարքի վտանգավորությունը և դրա վտանգավոր հետևանքների առաջացումը, բայց կարող էր և պարտավոր էր գիտակցել (հանցավոր անփութություն):

Ինչպես հանցավոր ինքնավստահությամբ դրսևորված մեղքը, այնպես էլ անփութությամբ դրսևորված մեղքն ունի հանրային վտանգավորության ավելի ցածր աստիճան, քան դիտավորությամբ կատարված հանցագործության յուրաքանչյուր դրսևորում: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել հանցավոր արարքի սուբյեկտիվ կողմին: Հանցագործություն կատարող անձն անգոչությունը կատարվող հանցագործության երկու դրսևորումների դեպքում էլ չի գիտակցում իր կատարած արարքի հանրային վտանգավորությունը, ինչպես նաև վրա հասանելիք վնասի հնարավորությունը այլոց իրավունքների ու ազատությունների, հանրային շահերին:

Հետևաբար, կարծում ենք, որ ասել, թե մեղքը միայն անձի սեփական վերաբերմունքն է իր կատարած արարքի նկատմամբ, այնքան էլ ճիշտ չէ: Ինչպես կարող է խոսք գնալ միայն սեփական վերաբերմունքի կամ ընկալման մասին, եթե արարքի սուբյեկտիվ կողմն առհասարակ բացառում է հանցագործության սուբյեկտի կողմից իր արարքի բացասական և ոչ իրավաչափ բնույթի գիտակցումը:

Հենվելով վերը նշված պնդման վրա, կարծում ենք, որ մեղքը ոչ միայն անձի սեփական վերաբերմունքն ու ընկալումն է իր կողմից կատարած հանրային վտանգավոր արարքի նկատմամբ, այլ նաև այլոց: Այլոց շարքին պետք է դասել ոչ միայն այլ անձանց, անկախ անձանք նրանց իրավունքների ու ազատությունների խախտված լինելու հանգամանքից, այլև առաջին հերթին պետությանը՝ նրա օրինաստեղծ մարմնին, որը սահմանել է որոշակի դեպքերում, որոշակի հատկանիշների համակցությամբ կատարված, որոշակի գործողություններ, որոնք թեև հանցագործության սուբյեկտի կողմից



կատարվել են չգիտակցելով դրանց ոչ իրավաչափ բնույթը, սակայն Սահմանադրությամբ օրինաստեղծ գործառույթ ունեցող պետական մարմնի կողմից հռչակվել են որպես հանցագործություն:

Կարծում ենք նաև, որ, եթե անգամ մեղքի տարբեր դրսևորումների պարագայում խոսենք անձի սեփական վերաբերմունքի մասին իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, ապա ինչո՞ւ պետք է շեշտադրվի միայն հոգեբանական վերաբերմունքը: Չէ՞ որ, օրինակ՝ ուղղակի դիտավորությամբ կատարված հանցանքի պարագայում հանցագործության սուբյեկտը հաճախ գիտակցում է նաև դրա իրավական հետևանքները:

Խորհրդային քրեական իրավունքի տեսության մեջ մեղքի նորմատիվիստական տեսությունը ձևակերպվեց Ուտեսկու, Տրայնիհի, Վիշինսկու աշխատություններում, որոնք առանձնացնում էին մեղքը որպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշ և որպես քրեական պատասխանատվության հիմք: Վերջինս դիտվում էր իբրև անձի և նրա արարքի այն բոլոր հանգամանքների համակցություն, որոնք դատարանի կողմից արժանի են բարոյական առումով բացասական գնահատականի (պարսավանքի):

Հետաքրքրական են մեղքի և մեղքի տեսության վերաբերյալ գերմանական իրավունքի մոտեցումները:

Մեղքի վերաբերյալ ուսումնասիրություններն ինտենսիվորեն ազդում են օրենսդրի, օրենքը կիրառողի, հնարավոր է և հասարակության իրավական դիրքերի, և դրանով իսկ քրեական քաղաքականության վրա: Այն հատուկ գիտակցման անհրաժեշտություն ունի, և մեղքի տեսության համապատասխան ասպեկտները, դրանց նշանակությունն արտահայտվում

են իր զարգացման տարմեր շրջադարձերում՝:

Մեր կարծիքով՝ մեղքի վերոնշյալ սահմանումը չի կարելի ընդունել որպես մեղքի ընդհանրական սահմանում, քանի որ մեր համոզմամբ՝ ընդհանրական սահմանում դառնալու համար այն ունի լրացման կարիք:

Մինչդեռ հարկ է նշել, որ այս սահմանումը դրսևորում է մեղքի հոգեբանական տեսությունը և բավարար է արտացոլելու մեղքի էությունը հոգեբանական ասպեկտով:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ «մեղք» հասկացության ամենաընդհանուր սահմանումը պետք է լինի առնվազն հետևյալը.

մեղքն անձի և պետության (հոգեբանական և/կամ իրավական) վերաբերմունքն է իր կողմից իրականացված արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ:

Վերոգրյալի համատեքստում, մեղքի իրավական բովանդակությունը անհրաժեշտ է բացահայտել նաև որպես հանցանք կատարած անձի պատժի հիմք համարվող մեղքի սահմանադրական սկզբունքի և քրեական իրավունքի՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի հարաբերակցության համատեքստում վեր հանվող կատեգորիա:

Նշվածի հաշվառմամբ, վերջնական արդյունքում մեղքի իրավական սահմանումը կարելի է տալ հետևյալ կերպ՝ «Մեղքն անձի հոգեբանական և պետության իրավական վերաբերմունքն ու ընկալումն է անձի կողմից իրականացված արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ, նրա պատժի հիմքը և այդ պատժի չափի «պատժաչափի» կանխորոշիչ տարրը»:

- ¹ Кудрявцев В.Н., Мотивы преступного поведения, Юридическая психология, 2012, № 4, с. 2-7, ст. 5.
- ² <http://www.grandars.ru/college/pravovedenie/vina.html#a1>.
- ³ https://spravochnick.ru/pravo_i_yurisprudenciya/ugolovnoe_pravo/vina_v_ugolovnom_prave/.
- ⁴ ՀՀ քրեական իրավունք ընդհանուր մաս, ԵՊՀ իրատ., Երևան, 2012, էջ 198:
- ⁵ Նույն աշխ., էջ 200:
- ⁶ Նույն աշխ., էջ 201:
- ⁷ Жалинский А.Э., Современное немецкое уголовное право, Изд-во «Проспект», Москва, 2004, ст. 211.



RESUME - РЕЗЮМЕ

THE ESSENCE OF GUILT AND PROBLEMS OF DISCLOSURE OF ITS LEGAL CONTENT, IN TERMS OF CONSTITUTIONAL LAW AND CRIMINAL LAW

V. Vardanyan

PhD Student at the Public Administration Academy of the RA

The work has attempted to reveal the essence of guilt as far as possible, to find the legal definition and content of it as fully as possible, taking into account both theoretical and practical manifestations of guilt .

An attempt was also made to identify the relationship between the constitutional principle of guilt and the principle of liability in accordance with the offence in accordance with the new constitutional regulations.

Particular attention has been paid to the specificity of guilt as a basis for punishment and its decisive role in the provision of punishment in the context of the logic of the constitutional principle of guilt.

Keywords: *guilt, the constitutional principle of guilt, the action, the subjective side of the action, the willful, directly willful, indirect willfulness, carelessness, criminal self-confidence, negligence, components of crime.*

СУЩНОСТЬ ВИНЫ И ЕЕ ПРАВОВОЕ СОДЕРЖАНИЕ В КОНТЕКСТЕ КОНФЛИКТА КОНСТИТУЦИОННОГО ПРАВА И УГОЛОВНОГО ПРАВА

В. Варданян

Аспирант Академии государственного управления РА

В работе предпринята попытка по возможности полно раскрыть сущность понятия «вина», найти его как можно более точное юридическое определение и содержание с учетом как теоретических, так и практических проявлений вины. Нами была также предпринята попытка раскрыть соотношение конституционного принципа вины и принципа ответственности по вине в соответствии с новыми конституционными регулюировками. Особое внимание было уделено специфике вины как основания для наказания и ее решающей роли при назначении наказания в контексте логики конституционного принципа вины.

Ключевые слова: *вина, конституционный принцип вины, деяние, субъективная сторона деяния, умысел, прямой умысел, косвенный умысел, неосторожность, преступное легкомыслие, небрежность, состав преступления.*

Բանալի բառեր - *մեղք, մեղքի մահմանադրական սկզբունք, արարք, արարքի սուբյեկտիվ կողմ, դիրավորություն, ուղղակի դիրավորություն, անուղղակի դիրավորություն, անզգուշություն, հանցավոր ինքնավարահոություն, անփութություն, հանցակազմ:*

Վ. Վարդանյան - ՀՀ ՊԿԱ ասպիրանտ, էլ. փոստ՝ virab_vardanyan@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 29.08.2019, տրվել է գրախոսության՝ 29.08.2019, երաշխավորվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի պրոֆեսոր Ա. Խաչատրյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 26.09.2019

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն